ՔՆՖԻ ԵՎ ՊԱՐԵԼՈՒ ԵՐԳԵՐ

1 ՄԵԶ ՄԱՄԱ[1]

Մեծ մամային առին, ձառին դաբեցին,
Լանքը բոլը վերշոկ-վերշոկ չափեցին։
Ասկից ունիս, անդից ունիս, մեծ մամա.
Օխա ու դես խուռմա ունիս, մեծ մամա.
Գանքունուզես մեջքիդ լայնքն է, մեծ
մամա...

Դեսքով-շենքով անթիկա իս, մեծ մամա,
Դեսոք էրեսով լուսնինդա իս, մեծ մամա,
Աղաններուն խելքին պալիքն իս, մեծ մամա,
Դղրիջներուն խելքերեն դըհանիս, մեծ
մամա,
Ջերերուն շողունքը դըվազցունուս, մեծ
մամա։

Մեծ մամային առին, ձառին զարեցին,
Սուդյաները օրենք անել փորձեցին.
Ձեր ու յաշ ոտրի էլլան փաթթված,
Վարձք ու մեղք, սուդ ու խոշտ խառնվեցան.
Օդամանը մայիլ էղավ քու դեսքին,
Սուդյաները շաշմիշ արին քու շենքեն։
Մեծ մամային առին, ձառեն քաղեցին,
Ձեր ու յաշ սուլյա Թախըմ խաղացին,
Առոք-փառոք սերի դունր ջամփեցին.
Տուրին առշևր նորեն դենե խաղացին։
Ա՜յ մեծ մամա, մեծ մամա, մեծ մամա,
Առանց րեղի մեզ հաղ կործ չի լըմըննա։

2 ԱՂՋԿԱ ԽՐԴԸ[2]

Բաբա, տուն ինձի որի՞ն րիդ գաս։
— Ես կեզացիի չիմ էշթալ,
Նա ինձի նեղը թաշով գրդանե։

Բաբա, տուն ինձի որի՞ն րիդ դաս,
— Ես ղուռնաճիի չիմ էշթալ,
Նա ինձի թենր խամիշի ղըխըզե։

Բաբա, տուն ինձի որի՞ն բիդ դաս,
—Ես կուզնիչիի չիմ էշթալ։
Նա ինձի քորուք քաշել գուդա։

Բաբա, տուն ինձի որի՞ն րիդ դաս,
— Ես քեմեշեճիի բիդ էշթամ,
Նա դըշալե, ես դրխաղամ։

3 ԴՄԲԸԼԻԳԻՆ ԲԱԲՈՒՔԸ

Ասօր դունդ ո՞վ էղավ.
— Դմբըլիգին բաբուքը։
— Ի՞նչ տիմացը արեցիք
Դմըըլիդին բաբուքին։
— Դարաք, պանիր, ղակուսկա,
Թուռշի խիար, գաբուստա,
Կինի, ռախի, նապիտկա,
Խաշած դոռել խըռենով,
Պրինձ փիլաֆ չամիչով։
Դընդլ-դընգլ շալեցինք,
Դընգլ-ղընդլ խմցուցինք,
Դընդլ-դրնդլ խաղցուցինք,
Դընդլ-դընդլ ջամփեցինք,
Դմբըլիգին բաբուրին.

4 ՀԱՔԱ ՀԱՐՍԸ[3]

Ջալին սուռը պացվեցավ.
Աթոռ-սեղան շարվեցավ.
Հարա Հարսը, ե՛լ խաղա՛,
Հեշ ումուռեդ թո՛ չի լա։
(Ումուռեդ ալ թո՛ չի լա)։

Մամաս դեփե չրռլըմա,
Ախրդս ղուզե խաթլամա,
Գայնե, մեմը յան կամ,
Գենե դելնիմ, պրխաղամ։

---

1 Այս երգի նոտագրված եղանակը տե՛ս նույն գրքում, Մ. Կյուլեճյանի ժողովածուն։

2 Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս նույն գրքում, Մ. Կյուլեճյանի ժողովածուն։

3 Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս նույն գրքում, Մ. Կյուլեճյանի ժողովածուն։

* * *

Մաշան Միշային ղըրավ,
Հեդր խաղալու էլլավ,
Էրդու անքամ ման էդավ,
Ժնքումին ալ յան էդավ։

Անուշին թուշը շաքար է,
Խոսք անցուննըր տիժար է,
Խիստ դսիրե շոկոլադ,
Հեդր բարբար մառմելադ։

Հաքա Վառուշ, տուռը պաց,
Պլաառկըս Նեսը մնաց,
Էրդու թուշդ շըրաքած,
Կորձս տռաշ շըրկնաց։

5. ՕԴԱՅ ՄԱՐԸ[4]

Ֆըշնաս ձառը հասիլ է,
Դղան բեշիգը լցիլ է,
Ֆըշնա գուզիմ, ասիլ է,
Ֆըշնա դվեք, ասիլ է։
Օդայ մարը լսիլ է
Ցավս փորըդ, ասիլ է,
Խըզղըն ուդիս, ասիլ է։
Իստիր մարը լսիլ է.
Վախ-վախ. դղաս, ասիլ է,
Աչքը արցունք լցվիլ է.
Համան դարիլ է. դվիլ է։

---

[4] Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս սույն գրքում, Մ. Կյուլենյանի ժողովածուն։